ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

08.01.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտորի՝ «Նոլինա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Նոլինա» ՍՊ ընկերության միջև 20.11.2023թ. կնքվել է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/ՄՀՀ-2 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), որի շրջանակներում «Նոլինա» ՍՊԸ-ն պետք է մինչև 2023թվականի դեկտեմբերի 14-ը մատակարարեր Պայմանագրով նախատեսված ապրանքները: «Նոլինա» ՍՊԸ-ն չի կատարել Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը և խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, համաձայն Պայմանագրի 2-րդ մասի 2.1.7 կետի: Հիմք ընդունելով վերոգրյալը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը և 6-րդ հոդվածի 2-րդ մասը

ՈՐՈՇԵՑԻ

1. «Նոլինա» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Սույն որոշման օրինակն ուղարկել մասնակցին և ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ռեկտոր՝ **Դ. Գալոյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ • ԱՊՄՍԳՀ • ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ • ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS • ՏՆՏ • ԳՀԱ • 01503224